



2013 PUBLIC EXAMINATION

Armenian

Continuers Level

Section 1: Listening and Responding

Transcript

Section 1, Part A

Text 1

Սեդա – Խաչիկ չորս ժամ է արդէն դաս կը սորվինք, դադարի պէտքը ունիմ:

Խաչիկ – Տակաւին շատ ընելիք ունինք Սեդա՝

Սեդա – Այսքան աշխատանքէն ետք կարճ դադարի մը արժանանանք: Քիչ մը հանգչելէ ետք աւելի լաւ կ'ըմբռնենք դասերը: Ես կ'առաջարկեմ երթանք այդ հոգակաւոր պաղպաղակաւաճատին: Շատ մօտ է ձեր տունին:

Խաչիկ – Հայրիկդ չի՞ նեղանար:

Սեդա – Խաչիկ այս պաղպաղակը անխտիր, բոլորի գնահատանքին արժանացած է:

Խաչիկ – Եթէ խոստանաս որ չուտով կը վերադառնանք եւ կը շարունակենք մեր աշխատանքը կ'երթամ:

Սեդա – Կրնամ հօրս ինքնաշարժը առնել, որ կէս ժամէն վերադարձած ըլլանք: Կեցի՛ր երկտող մը գրեմ իրեն:

Text 2

Սիրելի՛ աշակերտներ,

-Ես ձեզ կպատմեմ հովիւի ու այծերի մասին առակը: Այն լսելուց յետոյ կուզենայի լսել ձեր կարծիքը:

Ուրեմն, մի հովիւ իր այծերին տարաւ դաշտ: Այնտեղ նրանք արածեցին վայրի այծերի հետ: Երեկոյեան հովիւը թէ՛ իր այծերին եւ թէ՛ վայրի այծերին՝ քչեց իր քարայրը: Յաջորդ օրը եղանակը վատ էր: Հովիւը չէր կարող նրանց տանել դաշտ: Այծերը մնացին քարայրում:

Հովիւը անտեսում էր իր հին այծերին, իսկ նոր վայրի այծերին՝ առատ-առատ կեր էր տալիս: Նա մտածում էր, որ նոր այծերը աւելի շատ կաթ կտան:

Յաջորդ օրը եղանակը փոխւեց: Հովիւը այծերին քչեց դաշտ: Դաշտ հասնելու պէս նոր այծերը անմիջապէս փախան, որովհետեւ նրանք իմացան, թէ հովիւը իրենց օգտագործում էր իր անձնական շահերի համար:

Text 3

Սարօ – Անի, ի՞նչ են գործատեղի մէջ յաջող ըլլալու պայմանները քու կարծիքովդ:

Անի – Ես կը կարծեմ որ ժպիտը գլխաւոր պայմանն է:

Սարօ – Ուրեմն եթէ ըլլաս ծոյլ, բայց ժպտաս, պիտի կրնաս լաւ գործաւոր ըլլալ: Ես կը կարծեմ անձնական կարողութիւնները աւելի կարեւոր են:

Անի – Անշուշտ որոշ կարողութիւններ պէտք է ունենայ, սակայն առանց ժպիտի չես կրնար հասնիլ քու նպատակիդ, որովհետեւ աշխատակիցներդ պիտի չ'ուզեն օգնել քեզի:

Սարօ – Համաձայն չեմ, գործի աշխարհը լեցուն է անձերով, որոնք շատ չեն ժպտար, բայց մեծ շահեր կ'ապահովեն իրենց գործակիցները վարպետօրէն ղեկավարելով:

Անի – Կրնայ ըլլալ արդիւնաբեր են, սակայն անհաճոյ անձեր են եւ անոնց հետ աշխատիլը շատ դժուար է:

Սարօ – Գործատեղին սակայն յուրջ աշխատանքի վայր է:

Անի – Աշխարհի ամենայաջող գործատէրերը անոնք են, որոնք հաճոյքն ու անձնական կարողութիւնները հաւասար կը տեսնեն:

Section 1, Part B

Text 4

- Արա— Այսօր մեր հաղորդման ժամանակ ես կխօսեմ երիտասարդ վարորդների անպատասխանատու թեան մասին: Ահա նրանից մէկը Նորան է:
- Նորա — Դա արդար չէ, դուք ինձ չէք ճանաչում:
- Արա— Ի հարկէ: (ծիծաղում է)
- Նորա — Այո՛, ես երիտասարդ վարորդ եմ, բայց անուշադիր չեմ: Ես վշտանում եմ այն մաքրից, որ մարդիկ կարծում են, որ երիտասարդները արագ են վարում մեքենան եւ պիտի հոյս տալիս անպատասխան թեան տակ:
- Արա — Բայց Նորա իրատես եղիր, խնդրեմ բոլոր երիտասարդները արագ են վարում:
- Նորա— Դուք սխալ էք: Ես ճանաչում եմ շատերին, ովքեր.....
- Արա — Այդ դէպքում, ինչո՞ւ են շատ արկածներ տեղի ունենում երիտասարդների պատճառով:
- Նորա— Ես ճիշտ հակառակ փորձառութիւնն ունեմ: Վերջերս արկած ունեցայ: Ոստիկանութիւնը ինձ անմիջապէս մեղաւոր ճանաչեց առանց նոյնիսկ ինձնից բացատրութիւն խնդրելու: Վերջում պարզեց, որ միւս վարորդը խմած էր, նա միջին տարիքի անձ էր:
- Արա— Դա ծիծաղելի է:
- Նորա— Ճշմարտութիւնն այն է, որ ես ժամս եմ վառնում երբ փորձում եմ անկեղծ կարծիքս յայտնել: Շատ յստակ է, որ դուք ձեր կարծիքը չէք փոխի:

Text 5

Նարին – Արեգ շատ ցաւայի է սփիւռքահայ նոր սերունդի հայերէն չխօսելու այս երեւոյթը: Վստահ եմ որ մեր մշակոյթը լրջօրէն վտանգուած է:

Արեգ – Ի՞նչու այդպէս լաւատես չես: Անոնք լեզուն չեն խօսիր, բայց լաւ կը հասկնան: Մեր սովորութիւններն ու մշակոյթը կը պահպանեն: Ես կը կարծեմ, որ երկար դարեր կը յարատեւէ մեր գոյութիւնը:

Նարին – Արեգ, ազգային անկախութեան եւ գոյատեւման գաղափարները զօրաւոր են ժողովուրդի մը մէջ, երբ մայրենի լեզուն պահպանուի: Որով լեզուի միջոցաւ է, որ անհատ մը կը կազմէ իր ազգային ինքնութիւնը:

Արեգ – Լեզուն պարզապէս հաղորդակցութեան միջոց մըն է Նարին: Կարեւորն այն է որ մեր պապերու մեզի փոխանձած աւանդութիւնները պահենք եւ հպարտ զգանք մեր պայծառ անցեալով ու հայութեամբ:

Նարին – Բայց Արեգ արդեօք լեզուն այլ մեր պապերու մեզի փոխանձած մշակութային արժէքներէն մէկը չէ՞: Ուրեմն հիմա կը հասկնաս, թէ որքան կարեւոր է մեր լեզուն խօսիլը:

Արեգ – Իրաւունք ունիս: Պէտք է լրջօրէն մտածել ասոր մասին:

Text 6

Ողջոյն, սա «Երեւան», ռատիօ ծրագիրն է, եւ այսօր մեր հիւրն է Պրն Աղամեանը:

Հաղորդավար *Պրն Աղամեան, ես լսել եմ, որ դուք շատ դժւարութիւններ էք ունեցել այս գիրքը հրատարակելիս:*

Պրն. Աղամեան *Կեանքը դժւարութիւններով է լեցուն: Երբ ուզում ես նպատակի հասնել, լաւատես լինելը շատ կարեւոր է: Ես կարծում եմ, որ դրական մօտեցումը, իր հետ բերում է կեանքի բոլոր խնդիրների պատասխանները: Պէտք է ամէն ինչ անել, որ յաղթահարենք բոլոր դժւարութիւնները:*

Հաղորդավար *Ուրեմն ո՞րն է ձեր գրքի պատմութեան նիւթը:*

Պրն. Աղամեան *Մի երեխայի պատմութիւնն է, ում կեանքը շատ դժբախտ է: Պատմութեան ընթացքում սակայն նա հանդիպում է մարդկանց, ովքեր ցոյց են տալիս իրեն երջանկութեան ճանապարհը:*

Հաղորդավար *Ինչքան ժամանակում էք գիրքը գրել:*

Պրն. Աղամեան *Իրականում շատ երկար ժամանակ: Երջանկութեան մասին գիրք գրելը պահանջում է երկար տարիների հետազօտութիւն, ընթերցանութիւն եւ կեանքի փորձառութիւն:*

Հաղորդավար *Ուրեմն ո՞րն է երջանիկ կեանքի գաղտնիքը:*

Պրն. Աղամեան *Նայէ՛ք ձեր շուրջը եւ գնահատէ՛ք ձեր կեանքը: Եթէ որ դուք առողջ էք, ուրեմն դուք երջանիկ էք եւ օրհնեալ, սիրւած ու գոհունակ:*

Հաղորդավար *Շնորհակալութիւն, որ այսօր մեզ հետ էիք, պրն. Աղամեան:*

Պրն. Աղամեան *Շնորհակալ եմ որ իմ համեստ գրքին մեծ կարեւորութիւն տւեցիք:*